

**98/109/ԵՀ Անդամ պետությունների կողմից՝ Թայլանդից ներմուծվող
Տրիպսապալմի Կառնիի տարածման դեմ ժամանակավորապես արտակարգ
միջոցների ձեռնարկումը լիազորող Հանձնաժողովի 1998 թվականի
փետրվարի 2-ի որոշում**

Պաշտոնական տեղեկագիր L 027, 03.02.1998, էջ 0047 –0048

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին»
պայմանագիրը,

հաշվի առնելով «Բույսերի կամ բուսական արտադրատեսակների համար
վնասակար օրգանիզմները Համայնք ներմուծելու եւ Համայնքում դրանք
տարածելու դեմ պաշտպանիչ միջոցների մասին» 97/14/ԵՀ¹ հրահանգով
փոփոխված՝ Խորհրդի 1976 թվականի դեկտեմբերի 21-ի 77/93/ԵՏՀ
հրահանգը² եւ, մասնավորապես, դրա 15(3) հոդվածը,

եթե անդամ պետությունը համարում է, որ գոյություն ունի սեփական
տարածքում երրորդ երկրից Տրիպսապալմի Կառնիի ներմուծման անմիջական
վտանգ, կարող է ժամանակավորապես ձեռնարկել այդ վտանգից
պաշտպանվելուն ուղղված ցանկացած օժանդակ միջոցներ,

եթե Թայլանդում ծագող խոլորձների ընտանիքին դասվող կտրված
ծաղիկների հետ Տրիպսապալմի Կառնիի միախառնման արդյունքում տարբեր
անդամ պետություններ ձեռնարկել են պաշտոնական միջոցներ, որպեսզի
պաշտպանեն Համայնքի տարածքը նշված մարմինը ներմուծելու վտանգից եւ
հիմնեն լրացուցիչ դիտանցման հատուկ ընթացակարգեր նշված մարմնի
առնչությամբ տվյալ ապրանքներում,

¹ ՊՏ L 87, 02.04.1997թ., էջ 17:

² ՊՏ L 26, 31.01.1977թ., էջ 20:

քանի որ Տրիպսպալմի Կառնիի միախառնմամբ պայմանավորված արտակարգ միջոցները, որոնք կիրառվում են ամբողջ Համայնքի նկատմամբ, պետք է ձեռնարկվեն՝ տվյալ երկրից Համայնք ներթափանցող Տրիպսպալմի Կառնիի դեմ առավել արդյունավետ պաշտպանություն ապահովելու նկատառումով, եւ, քանի որ այս միջոցներով պահանջվում է ապահովել բուսասանիտարական հավաստագիր՝ տրված Թայլանդում ծագող Խոլորձների ընտանիքին դասվող կտրված ծաղիկների համար՝ պաշտոնական գրությամբ, որում պարունակվում է նշում այն մասին, որ արտադրամասը գերծ է Տրիպսպալմի Կառնիից կամ ապրանքները ենթարկվել են համապատասխան ծխահարմամբ մշակման՝ ապահովելու դրանց՝ տիզանոպտերայից գերծ լինելը,

քանի որ, եթե պարզվում է, որ սույն Որոշման 1-ին հոդվածով նշված արտակարգ միջոցները բավարար չեն՝ կանխելու Տրիպսպալմի Կառնիի ներթափանցումը կամ այդ միջոցները չեն պահպանվել, անհրաժեշտ է նախատեսել առավել խիստ կամ այլընտրանքային միջոցներ,

քանի որ արտակարգ միջոցների ազդեցությունը պարբերաբար գնահատվելու է 1997/1998 թվականների ընթացքում, եւ այս գնահատման արդյունքների լույսի ներքո կդիտարկվի Թայլանդում ծագող Խոլորձների ընտանիքին դասվող կտրված ծաղիկների ներմուծման նկատմամբ կիրառվելիք հնարավոր հետագա միջոցները,

քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական հանձնաժողովի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

Հոդված 1

Թայլանդում ծագող Խոլորձների ընտանիքին դասվող կտրված ծաղիկները կարող են ներմուծվել Համայնքի տարածք բացառապես այն դեպքում, եթե պահպանվել են սույն Որոշմանը կից հավելվածով սահմանված արտակարգ միջոցները: Հավելվածում նշված արտակարգ միջոցները կիրառվում են միայն

Թայլանդից փոխադրվող ապրանքների նկատմամբ, այն բանից հետո, երբ Հանձնաժողովը տեղեկացրել է տվյալ երկրին այդ միջոցների մասին:

Հոդված 2

Ներմուծում իրականացնող անդամ պետությունները Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին՝ նախքան 1998 թվականի օգոստոսի 30-ը, տրամադրում են տեղեկատվություն սույն Որոշման համաձայն ներմուծված քանակությունների վերաբերյալ եւ մանրամասն տեխնիկական հաշվետվություն՝ հավելվածի 3-րդ կետով նշված պաշտոնական ստուգման մասին:

Հոդված 3

Սույն Որոշումն անհրաժեշտ է վերանայել ամենաուշը մինչեւ 1998 թվականի սեպտեմբերի 30-ը:

Հոդված 4

Սույն Որոշումը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1998 թվականի փետրվարի 2-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Ֆրանց ՖիշԼԵՐ

Հանձնաժողովի անդամ

ՀԱՎԵԼՎԱԾ

1-ին հոդվածի դրույթների նպատակով պահպանվում են հետեւյալ արտակարգ միջոցները.

1. Խոլորձների ընտանիքին դասվող՝ կտրված ծաղիկներն անհրաժեշտ է, որ.

ա) պատրաստված լինեն այնպիսի արտադրամասում, որը, արտահանմանը նախորդող երեք ամսվա ընթացքում առնվազն ամսական կտրվածքով իրականացվող պաշտոնական ստուգումների արդյունքում հայտարարվել է զերծ Տրիպսալմի Կառնիից, կամ,

բ) որպես ապրանքներ՝ ենթարկված լինեն համապատասխան ծխահարմամբ մշակման նախքան արտահանումը՝ ապահովելու դրանց՝ տիզանոպտերայից զերծ լինելը:

2. Խոլորձների ընտանիքին դասվող կտրված ծաղիկներին կցվում է Թայլանդում տրված բուսասանիտարական հավաստագիր՝ համաձայն 77/93/ԵՏՀ հրահանգի 7-րդ եւ 12-րդ հոդվածների առաջին կետի ներքո թվարկված պահանջների հիման վրա:

Բուսասանիտարական հավաստագրով «Լրացուցիչ հայտարարագիր» վերնագրի ներքո նշվում է, թե 1(ա) կամ 1(բ) տարբերակներից որն է գործարկվել, ինչպես նաեւ, բոլոր այն դեպքերում, երբ գործարկվել է 1(բ) տարբերակը, «Վարակազերծում եւ (կամ) մաքրում վարակազերծման միջոցով» վերնագրի ներքո նշվում է նախքան արտահանումը կիրառված ծխահարմամբ մշակման մասին:

3. Խոլորձների ընտանիքին դասվող կտրված ծաղիկները՝ դրանք Համայնք ներմուծելու դեպքում, ստուգվում են համաձայն 77/93/ԵՏՀ հրահանգի 12(1)(ա) հոդվածի դրույթների՝ սույն Հրահանգով նշված պատասխանատու պաշտոնական մարմինների կողմից: